


## ՀԱՆԳԻՍ

ԳԵՐ. Տ. ՊԱՐԳԵՒ Ս. ԵՊՈ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆԻ



**Ս. Յակոբեանց Միաբանութիւնը սրտաբեկ եւ խոր վիշտով կը գումէ անակնկալ վախճանումը Գիր. Տ. Պարգեւ ևպա. Վրթանէսեանի, որ տեղի ունեցաւ Հինգշարթի, 18 Հոկտեմբերի զիշերուան ժամը 10.30ին, իր սենեակին մէջ, սրտի կաթուածի հետեւանքով :**

Հանգուցեալ Սրբազնը ծնած է 1906ին, Փոքր Ասիոյ Պալլքէսիր քաղաքը, աւազանի անունով Եղիկ: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն ազգ. նախակրթարանին մէջ, ապա անցած է Կ. Պոլիս, Գում-Գրուի մօտ Լանկայի Մինասեան վարժարանին մէջ երկու տարի, 1918-1920 իր ուսումը շարունակելու: Աշակերտած է նաև Պոլսոյ Կեդրոնական վարժարանին (1920-1923):

1925ին, Երուսաղէմ գալով, իբրև Արմաշի կողմէ դրկուած ժառանգաւոր սան, աշակերտած է Ս. Աթոռոյս ժառ. Վարժարանին։ Յաջորդ տարի, Տ. Եղիշէ Դուրեսան Պատրիարքէն ծեռնազրուած է Սարկաւագ՝ իսկ 1930ին՝ Աքեղայ, Տեղապահ Տ. Մերորա Սրբազնէն։ Անկէ ասդին, հանգուցեալը վարեց զանազան պաշտօններ Ս. Աթոռէն ներս։ Աւագ-Քարգման, Ա. Յարութեան Տաճարի Տեսուչ, Գանձապիտ, Ժամօրնող, անդամ Գանձատան Մարմնոյ, եւ այլ պաշտօններ մինչեւ իր վախճանումը։ Երկիցս ընտրուած է նաեւ անդամ Տնօրէն Ժողովոյ։ Տարի մը առաջ, Ա. Էջմիածնի մէջ, նորընտիր Տ. Տ. Վաղգէն Կաթողիկոսէն ծեռնազրուած է Եպիսկոպոս։

Գեր. Տ. Պարգև Սրբազնի անժամանակ եւ յեղակարծ մահը շուարումի եւ անօրինակ յուզումի մը մատնեց բովանդակ Միաբանութիւնը։ Անիկա իր Փիզիքական եւ մտաւոր ուժերուն ծաղկեալ շրջանին մէջ կը զտնուէր եւ մեր Եկեղեցին ու ժողովուրդը ակնկալութիւններ ունեէին իրմէ։

Եկեղեցասէր եւ Աթոռանուէր կրօնականին քովի ի վեր յատկանշական էին իր մօտ նկարագրի գեղեցիկ եւ փնտուող գիծեր։ Բարի եւ առաքինի Եկեղեցական մըն էր, աւանդապահ եւ զրծունեայ։

Կանոնաւոր աշխատակից մըն էր «Սիոն» պաշտօնագրիս։ Բացի իր անտիպ ուսումնասիրութիւններէն, Հանգուցեալը հրատարակած էր հետեւեալ զործերը։ —

- 1) Ա. Յարութեան Տաճարին մէջ Հայոց Ա. Գր. Լուսաւորիչ Եկեղեցին։
- 2) Ա. Յարութեան Տաճարը եւ Քրիստոն Ա. Գերեզմանը։
- 3) Եղիշէ Պատմապիր եւ Վարդանանց Պատերազմը։

Սրբազնին հոգւոյն համար Շաբաթ, 20 Հոկտ.ի առաւօտուն, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ա. Պատարագ։ Պատարագեց Գեր. Տ. Զգոն Մ. Վրդ. Տէր Յակոբըն, իսկ Գեր. Տ. Հայկացուն Եպս. Սրբահամեան յուզի դամբահականով մը վեր հանեց Հանգուցեալի նկարագրին բարեմասնութիւնները, աւելի քան քառորդ դարու իր Միաբանական կեանքի ընթացքին։ Կերպին օծումը կատարեց եւ Ա. Պատարագէն ետք Թաղման կարգին նախազահեց Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմիանեան։ Արարողութեանց ներկայ էր բովանդակ Միաբանութիւնն ու ժողովուրդի ստուար բազմութիւն։ Մարմինը ամփոփուեցաւ Զամ-Թաղի գերեզմանատան մէջ։

Սիոն, յանուն Ս. Աթոռոյս նորընտիր Տեղապահ Գեր. Տ. Տիրան Սրբապահ, իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ազգականներուն եւ կ'աղօթէ որ Ամենակալը Ս. Եկեղեցւոյ երանելի Հայրապետներուն շարքին դասէ իր սրբազն Պաշտօնեայի հոգին։

«Յիշատակն արդարոց օրնութեամբ եղիցի»։ Ամէն։

